ԱԺԲԳ

ՏԵՂԵԿԱՆՔ

2021-2023թթ. ՀՀ տնտեսությունը բնութագրող հիմնական մակրոտնտեսական ցուցանիշների վերաբերյալ (հունվար-դեկտեմբեր)

Տնտեսական ակտիվության ցուցանիշ (ՏԱՑ)՝ %







Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Տնտեսական ակտիվության ցուցանիշը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ (աճողական) կազմել է՝ 109.4%, 2022թ. հունվար-դեկտեմբերին 2021թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 114.2 %, իսկ 2021թ. հունվար-դեկտեմբերին 2020թ. նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 105.8%:

Արդյունաբերական արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-դեկտեմբեր կազմել է 2 տրլն 783 մլրդ 214.8մլն դրամ, ինչը 2022 թ նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 99մլրդ 660.9 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 397 մլրդ 305.1 մլն դրամով:

Իրականացված շինարարության ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-դեկտեմբերին կազմել է 619 մլրդ 686 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 78 մլրդ 575.6 մլն և 149 մլրդ 607 մլն դրամով:

Առևտրի շրջանառությունը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 5 տրիլ, 492մլրդ 384.2 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 1 տրլն 122 մլրդ 97.2 մլն և2 տրլն 101մլրդ 501 մլն դրամով, իսկ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հունվար-դեկտեմբեր կազմել է 3 տրիլիոն 25 մլրդ 912,2 մլն դրամ, ինչը 2022 և 2021թթ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 450 մլրդ 121.4 մլն և1տրլն 146 մլրդ, 651.1 մլն դրամով:

Արդյունաբերական արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 104.1%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107,9 %-ի և 103.3 %-ի պարագայում:

Իրականացված շինարարության ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 114.8 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 112.5 %-ի և 107.4-ի %-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)





Առևտրի շրջանառության իրական աճը 2023թ հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 125.7 % 2022-2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 117.0%-ի և 107.5 %-ի պարագայում. իսկ այլ ծառայությունների ծավալի իրական աճը 2023 հունվար-դեկտեմբեր 2022թ. հունվար-դկտեմբեր նկատմամբ կազմել է 110.3 %, 2022 և 2021 թվականների ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 128.2 %-ի և 107.8 %-ի պարագայում:

Հանքագործական արդյունաբերություն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-դեկտեմբեր կազմել է463 մլրդ198. 2 մլն դրամ, ինչը 2022թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ պակաս է 54 մլրդ 228.1 մլն դրամով, 2021 թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ՝ 124 մլրդ 726.2 մլն դրամով: Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-դեկտեմբեր կազմել է 1 տրլն 970 մլրդ 63.7 մլն դրամ, ինչը 2022 թ և 2021 թ նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է՝ համապատասխանաբար 159 մլրդ 914.3 մլն և 474 մլրդ 278.6 մլն դրամով: Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալը 2023թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 320մլրդ 279.3 մլն դրամ, (ընթացիկ գներով), ինչը 2022թ. ցուցանիշից պակաս է 8 մլրդ 620.4 մլն դրամով, իսկ 2021թ. նույն ժամանակաշրջանի համեմատությամբ ավել է 41 մլրդ 60.1 մլն դրամով:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-դեկտեմբեր կազմել է 29 մլրդ.673.6 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021թ. նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 2 մլրդ 585.1 մլն և 6 մլրդ 692.6 մլն դրամով:

Հանքագործական արդյունաբերությունն և բացահանքերի շահագործում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 93.6%, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 96.8%-ի և 99.2 %-ի պարագայում:

Մշակող արդյունաբերության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 106.7 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 113.5 %-ի և 103.4 %-ի պարագայում:

Էլեկտրաէներգիայի, գազի, գոլորշու և լավորակ օդի մատակարարում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմաբ կազմել է 106.3 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 100.9 %-ի և 109.3 %-ի պարագայում:

Ջրամատակարարում, կոյուղի, թափոնների կառավարում և վերամշակում գործունեության մասով արտադրանքի ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբեր 2022թ.հունվար-դեկտեմբեր նկատմամբ կազմել է 106.1 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 107.6%-ի և 107.1%-ի պարագայում:

ԱԺԲԳ

Իրական աճը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Սպառողական գների ինդեքսը (ՍԳԻ) նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (%)



Զուտ միջազգային պահուստներ (ԶՄՊ), ժամանակաշրջանի վերջի դրությամբ, մլն. դրամ





Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ.հուվար-դեկտեմբեր կազմել է 270 մլրդ 708.3 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 24 մլրդ, 760.4 մլն և 36մլրդ 475.4 մլն դրամով:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հուվար-դեկտեմբեր կազմել է 629 մլրդ 360.5 մլն դրամ, ինչը 2022թ. և 2021 թ,ի նույն ժամանակաշրջանների համեմատությամբ ավել է համա պատասխանաբար 164 մլրդ 516.6 մլն և 302 մլրդ 513.6 մլն դրամով:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալը (ընթացիկ գներով) 2023թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 808 մլրդ 330.9 մլն դրամ, ինչը 2022 և 2021 թվականների նույն ժամանա կաշրջանների համեմատությամբ ավել է համապատասխանաբար 31 մլրդ 828.3 մլն և 337 մլրդ 654.6 մլն դրամով:

Մշակույթ, զվարճություններ և հանգիստ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 109,6 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 104.7 %-ի և 68.5 %-ի պարագայում:

Տեղեկատվություն և կապ ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերի 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 135,4 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 142.0 % և 112,2 %-ի պարագայում:

Ֆինանսական և ապահովագրական գործունեություն ծառայությունների ծավալի իրական աճը 2023թ. հունվար-դեկտեմբերին 2022թ. հունվար-դեկտեմբերի նկատմամբ կազմել է 93.1 %, 2022 և 2021 թվականների, ինչպես նաև 2021 և 2020 թվականների համեմատվող նույն ժամանակաշրջանների 149.3%-ի և 101.0 %-ի պարագայում:

ՍԳԻ-ն 2023թ. 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 102.0%, 2022թ դեկտեմբերին 2021թ նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 108.6%, 2021թ. դեկտեմբերին 2020թ.նույն ժամանակաշրջանի նկատմամբ՝ 107.2%: ՍԳԻ-ն 2023թ. դեկտեմբերին 2022թ. դեկտեմբերի նկատմամբ կազմել է 99.4%, 2022թ. դեկտեմբերին 2021թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 108.3 %, 2021թ. 2020թ.դեկտեմբերի նկատմամբ՝ 107,2%:

Զուտ միջազգային պահուստները (ԶՄՊ) 2023թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 1 տրլն 115 մլրդ 520 մլն դրամ, ինչը 171 մլրդ 160 մլն դրամով կամ 13.3 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից 64մլրդ 853 մլն դրամով կամ 5,5 %-ով 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Աշխատանք փնտրողների թիվը 2023թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 64190 մարդ, ինչը 6354 մարդով կամ 9 %-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 22206 մարդով կամ 25.7 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից: Պաշտոնապես գրանցված գործազուրկների միջին ամսական թվաքանակը 2023թ. դեկտեմբերի վերջի դրությամբ կազմել է 46502 մարդ, ինչը 2578-ով կամ 5,3.%-ով պակաս է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 11420 մարդով կամ 19.7 %-ով պակաս է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

ԱԺԲԳ

ՀՀ արտաքին առևտրաշրջանառությունը և առևտրի հաշվեկշիռը (մլն ԱՄՆ դոլար)



ՀՀ արտահանումը և ներմուծումը (մլն ԱՄՆ դոլար)



Միջին ամսական անվանական աշխատավարձը աճողական, դրամ



Պետական բյուջեի պակասուրդը/հավելուրդը և դրա ֆինասավորման աղբյուրները, ընթացիք գներով, մլն դրամ



Արտաքին և փոխադարձ առևտրի առևտրաշրջանառության ծավալը 2023թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 20 մլրդ 723.1 մլն. դոլար, ինչը 6 մլրդ 528.2 մլն դոլարով կամ 46 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 12 մլրդ 344. 9 մլն. դոլարով 147.3 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտաքին առևտրի հաշվեկշիռը 2023թ. դեկտեմբերին կազմել է է - 3 մլրդ 892.8 մլն դոլար, ինչը -536 մլն դոլարով կամ 16 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և -1 մլրդ 546.6 մլն դոլարով կամ 65.9 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Արտահանման ծավալը (ՖՕԲ գներով) 2023թ. կազմել է 8 մլրդ.415.2 մլն դոլար, ինչը 2 մլրդ 996.1 մլն.դոլարով կամ 55.3 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 5 մլրդ 399.2 մլն դոլարով կամ 179 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Ներմուծման ծավալը (ՍԻՖ գներով) 2023թ. դեկտեմբերին կազմել է է 12 մլրդ 308 մլն դոլար, ինչը 3 մլրդ 532.1 մլն. դոլարով կամ 40.2 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 6 մլրդ 945.8 մլն դոլարով կամ 129.5%-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

Միջին ամսական անվանական աշխատավարձը (աճողական) 2023թ. հունվար-դեկտեմբերին կազմել է 269994 դրամ, ինչը 34418 դրամով կամ 14.6 %-ով ավել է 2022թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից և 65946 դրամով կամ 32.3 %-ով ավել է 2021թ. նույն ժամանակաշրջանի ցուցանիշից:

2023թ. հունվար-դեկտեմբերին ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է -188 մլրդ 891.3 մլն դրամ ընդ որում, ներքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը՝ 412 մլրդ 373 մլն դրամ, արտաքին աղբ յուրների հաշվին ֆինանսավորումը՝ -223մլրդ 481.7 մլն դրամ: 2022թ. հունվար-դեկտեմ.ՀՀ պետական բյուջեի պակասուրդը կազմել է-179 մլրդ 463.2 մլն դրամ: Ընդ որում ներքին և արտաքին աղբյուրների հաշվին ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 288,078.3 և -108,615,1 մլն դրամ: 2021թ. հունվար-դեկտեմբերին պետական բյուջեի պակասուրդը կազմել է -303 մլրդ 927.1 մլն դրամ, ընդ որում ներքին և արտաքին աղբյուրներից ֆինանսավորումը կազմել է համապատասխանաբար 109,067,9 և 194,859.4 մլն դրամ:

Տեղեկատվության համար աղբյուր են հանդիսացել Հայաստանի Հանրապետության վիճակագրական կոմիտեի ինտերնետային կայքի հրապարակումները ՀՀ սոցիալ-տնտեսական վիճակի վերաբերյալ